

**7.**

## **ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА**

### **ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԴԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ**

**Մ. Ն. ԿԵՐԳԱՅԱՆ  
Տնտեսագիտությամբ թեկնածու, դոցենտ  
Է. Պ. ՄԱՍՈՒԿՅԱՆ  
գոյշ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի**

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) պատմությունն առանձնանում է յուրահատուկ զարգացումներով, որն իր նշանակալի ազդեցությունն է բողնում երկրի տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա: Կարևորելով ՓՄՁ-ների դեղու երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ծևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ների պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ: Որպես ՓՄՁ-ների նկատմամբ իրականացվող հետևողական տնտեսական քաղաքականության տրամաբանական արդյունք՝ վերջին տարիներին արձանագրվել է ՓՄՁ-ների գործունեությունը բնութագրող ցուցանիշների դիմամիկ ած: ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալներով՝ 01.01.2010թ.-ի դրությամբ անհատական ձեռնարկությունների թիվը կազմել է 7162, իսկ գրանցված անհատ ձեռնարկատերերի թիվը՝ 83599 է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է 12,1%-ով: Ընդ որում՝ ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը՝ 132,923 էր, ինչը կազմում է գրանցված անհատ ձեռնարկատերերի և առևտրային իրավաբանական անձանց շուրջ 97.7%-ը:

Անշուշտ, ՓՄՁ-ների գործունեությունը կարևոր դեր է խաղում երկրի տնտեսության համախառն ներքին արդյունքի ծևավորման գործում: 2009թ.-ին ՓՄՁ-ների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում կազմել է 42.5%, որը 2008թ.-ին կազմում էր 41.7%, իսկ 2007թ.-ին՝ 41.0%: Իսկ ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի տեսակարար կշիռն արտահանման ծավալում կազմել է 17.7%, որը 2008թ.-ին կազմում էր 17.9%, իսկ

2007թ.-ին՝ 17.4%: Նշանակալի է ՓՄՁ-ների դերը նաև երկրի հարկաբյուջետային ցուցանիշների ձևավորման գործում: ՓՄՁ սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների տեսակարար կշիռն ընդհանուր բյուջետային եկամուտներում կազմել է 38.6%:

Մայրաքաղաքի և մարզերի համամասնական տնտեսական զարգացման, բնակչության զբաղվածության ապահովման ու նրա սոցիալական վիճակի բարելավման, հետևաբար, սոցիալապես անապահով խավի աղքատության հաղթահարման գործում կարևորվում է ՓՄՁ-ների պետական աջակցության, զարգացման, գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման նպատակով իրականացվող ծրագրերի դերը: Այդ ծրագրերը նպաստում են ՀՀ տնտեսության, հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացման ու առևա սոցիալ-տնտեսական անհամամասնությունների հաղթահարմանը, որը կնպաստի բնակչության միջին խավի ձևավորմանը: Պետք է նշել, որ պետության որդեգրած այս քաղաքականությունը կխթանի ոչ միայն փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը, այլև հանդիսանում է նոր աշխատատեղերի ստեղծման, հետևաբար նաև զբաղվածության ապահովման, բնակչության եկամուտների աճի և գործազրկության կրծատման կարևոր նախապայման:

Հատկապես կարևորվում է ՓՄՁ սուբյեկտների դերը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Նոր ՓՄՁ սուբյեկտների ստեղծման, ինչպես նաև գործող ՓՄՁ սուբյեկտների գործունեության ընդլայնման արդյունքում ապահովվել է շուրջ 28.4 հազար նոր աշխատատեղ, ընդ որում՝ զբաղվածների ընդհանուր թվով ՓՄՁ-ներում կազմում է աշխատողների 37.6%-ը, որից 43.7%-ն ապահովվել է Հայաստանի Հանրապետության մարզերում, իսկ 56.3%-ը՝ Երևան քաղաքում:

ՓՄՁ-ների գործունեության արդյունավետությունը բացահայտելու համար փորձել ենք պարզաբանել բիզնեսի և աշխատանքի շուկայի փոխկապվածությունը:

Այդ նպատակով Գեղարքունիքի մարզում կատարել ենք ուսումնասիրություններ հետևյալ հարցերի շուրջ՝

- աշխատանքային ռեսուրսների հատկանիշների գնահատում,
  - հարցված ծեռնարկություններում մասնագետների բաշխվածությունն ըստ տարիքային խմբի,
  - կադրային փոփոխությունների ուղղվածություն:
  - ծեռնարկությունների կողմից կրթական հանակարգի որակի գնահատում:
- Հետազոտությամբ պարզել ենք գործատուների կարծիքը ծեռնարկություններում աշխատողների և նրանց աշխատանքային հատկանիշների վերաբերյալ: Գործատուների մեծամասնությունը բարձր է գնահատել հատկապես հետևյալ հատկանիշները՝ վերապատրաստվածություն, երիտասարդական տարիք, մասնագիտական կրթություն, աշխատանքի փորձ և աշխատասիրություն: Այս պարագայում նրանք կարևորում են հատկապես մասնագիտական և կրթական հատկանիշները և, ի տարբերություն մյուս գործատուների, որպես կարևոր հատկանիշ համարում երիտասարդ տարիքը:

Նշենք, որ նախկինում մարզում գործող արտադրական խոշոր ծեռնարկությունների գործե չաշխատելու պատճառով կտրուկ նվազել է բարձր որակավո-

րում և մասնագիտական կրթության պահանջարկ ներկայացնող գործատուների թիվը, և կարևորվում է աշխատասիրության հատկանիշի առկայությունը: Անշուշտ, այս առումով, աշխատանքային ռեսուլսների մասնագիտական դրակների անտեսումը կիանգեցնի ձեռնարկությունների մրցունակության անկման: Ուսումնասիրությունների արդյունքում նկատել ենք, որ աշխատաշուկայում առկա են նաև հետևյալ հիմնախնդիրները.

● Մարզային ձեռնարկությունները չեն կարողանում բավարար աշխատավարձ ապահովել բարձր որակավորում ունեցող կաղդերին, որի պատճառով նրանք նոր աշխատատեղ են փնտրում այն գործատուի մոտ, որը նրանց կտա համեմատաբար ավելի բարձր աշխատավարձ, կամ նոր աշխատանք գտնելու նպատակով տեղափոխվում են մայրաքաղաք:

● Որոշ կազմակերպությունների դեկավարներ չունեն կառավարման բավարար հմտություններ և չեն ձգտում գործ ունենալ մասնագիտական փորձ և կրթություն ունեցող մարդկանց հետ:

● Մարզային բիզնեսը կենտրոնացված է մասնագիտական ցածր կարողություններ պահանջող ճյուղերի վրա:

Վերլուծությունները վկայում են, որ մարզի տարածաշրջաններում գործող ձեռնարկությունները տարատեսակ են նայում աշխատակազմի միջին տարիքին և մասնագիտական պատրաստվածությանը: Նրանք նախընտրում են աշխատանքի ընդունել բարձրագույն կրթություն և բարձր որակավորում ունեցող մասնագետների, սակայն ծառայությունների ոլորտում գործատուն նախընտրում է երիտասարդ տարիքը, վայելուց ու գեղեցիկ արտաքինը: Օրինակ՝ Սևանի տարածաշրջանում տնտեսության մեջ կատարվող որակական տեղաշարժերը (Սևանա լճի մերձափնյա համաստի գոտու ինտենսիվ զարգացում, զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ աճ) ներկայացնում են այս ոլորտին համապատասխան մասնագետների պահանջարկ:

Պետք է նշել, որ գործատուներու աշխատակազմի փոփոխություն չեն նախատեսում սահմանամերձ գոտում՝ ճամբարակի տարածաշրջանում: Հատկապես մարզկենտրոնից ավելի հեռու գտնվող տարածաշրջաններում՝ Վարդենիսում և ճամբարակում գործատուները նախընտրում են համեմատաբար ավագ տարիքի աշխատակիցներին, իսկ Գավառում և Մարտունիում առավելությունն ակնհայտորեն երիտասարդների կողմն է:

Գործատուների մոտ մասնագետների պահանջարկը դիտարկելու նպատակով հարցումներ ենք կազմակերպել նաև մի քանի կազմակերպություններում, որտեղ պահանջվող մասնագետների քանակը շատ սահմանափակ էր:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձեռնարկությունների նոր աշխատակիցներով համալրումը պայմանավորված է նաև կրթական համակարգի նկատմամբ նրանց տածած վստահության աստիճանով: Այս առումով կարևորվում է կրթական հաստատությունների դերը, որոնք տնտեսությունն ապահովում են բարձր որակավորում ունեցող մասնագետներով՝ արձագանքելով աշխատաշուկայի պահանջարկին: Հետևաբար, բարձր որակավորում ունեցող մասնագետներն իրենց մասնակցությամբ և աշխատանքով կարող են ազդեցություն ունենալ ինչպես տնտեսության մրցունակության վրա, այնպես էլ նպաստել բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը:

Այսպիսով, բիզնեսի և աշխատանքի շուկայի փոխկապակցվածության ու-

սումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ, ի տարբերություն արևածագան երկրների, ՀՀ-ում փոքր ու միջին բիզնեսի կազմակերպման գործում առկա են նաև մի շարք ֆինանսական իհմնախնդիրներ՝

- հարկային բեռի բարձր մակարդակ և թերի իրավական դաշտի առկայություն,

• ֆինանսական ներդրումների և ֆինանսավորման աղբյուրների սահմանափակություն,

- օրենսդրական և իրավական երաշխիքների բացակայություն,

- տնտեսական և քաղաքական անկայունություն,

- բարձր տոկոսադրույքների առկայություն:

Այդ առումով Հայաստանի Հանրապետությունում փոքր բիզնեսի զարգացման առաջնային խնդիրներից են՝

- իրավական դաշտի կատարելագործումը,

- հարկայի դրույքաչափերի նվազեցումը,

- օրենսդրական բազայի և իրավական երաշխիքների ապահովումը:


Յարկ է նշել, որ ՓՄՁ աջակցության ժամանակակից ենթակառուցվածքները և գործուն մեխանիզմները հիմք են հանդիսանում ՓՄՁ-ի հեռանկարային զարգացման համար՝ ուղղված գիտատար և նորարարական արտադրությունների աջակցությանը, առաջավոր տեխնոլոգիաների փոխանցման համար նպաստավոր պայմանների ձևավորմանը և ՓՄՁ սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնմանը։ Այս զարգացումների համատեքստում կարևորվում է միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների (ծրագրերի) ակտիվ ներգրավումը ՓՄՁ-ների զարգացման և աջակցության ծրագրերի մշակման ու իրականացման գործընթացում։

Ընդհանուր առմանը, 2010թ.-ին Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի կողմից վերը նշված ուղղություններով բավարարվել է 8,379 աջակցության հայտ։

<b>Ը/Կ</b>	<b>Տրամադրված աջակցության ուղղությունը</b>	<b>Աջակցության հայտերի թվաքանակ</b>
1	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	<b>6,872</b>
2	Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	<b>130</b>
3	Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	<b>30</b>
4	Թողարկվող արտադրանքինայուցվող ծառայությունների շուկաներ առաջնաման աջակցություն	<b>49</b>
5	ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տոկոսի մասնակի սուբսիդավորում	<b>3</b>
6	Վարկային երաշխավորությունների տրամադրում	<b>13</b>
7	ԶԵՅ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	<b>16</b>
8	Ուսուցողական աջակցություն	<b>1,266</b>
	<b>Ընդամենը</b>	<b>8,379</b>

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 21.2%-ը գործում է Երևան քաղաքում, իսկ 78.8%-ը՝ ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

### **Աջակցություն ստացած ՓՄՁ-ների բաշխվածքն ըստ մարզերի**



Յարկ է նշել, որ ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում 01.01.2011թ. դրությամբ տրամադրվել է 63.5 մլն ՀՀ դրամի երաշխավորություն 13 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 136.3 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Աջակցություն ստացած 13 ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է 171.3 մլն դրամ:

Սակայն ՓՄՁ-ների գործունեությունն ապահովելու գործում առկա են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործուներով պայմանավորված հիմնախնդիրներ, որոնց «բախսվում» են ՓՄՁ սուբյեկտները: Դրանք են՝

- ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական (վարկային) միջոցների անմատչելիություն,
- գործարար տեղեկատվության և խորհրդատվության ստացման ու կաղրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա դժվարություններ,
- ՓՄՁ սուբյեկտների կրոմից թողարկվող արտադրանքի (մասնուցվող ծառայություններ)՝ շուկաներ «ներթափանցելու» հետ կապված խնդիրների առկայություն,
- սկսնակ գործարարների համար ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված գործարար հմտությունների պակաս:

Վերջին տարիներին Յայաստանի Յանրապետությունում լուծվել են ՓՄՁ սուբյեկտների գործունեությանը և զարգացմանը խոչընդոտող բազմաթիվ խնդիրներ, ՓՄՁ-ի հետագա զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշ-

տուրքուն է առաջանում՝ լուծելու հատկապես ՓՄՁ ֆինանսավորման (վարկավորման) և տեխնիկական աջակցության բնագավառի որոշակի հիմնախնդիրներ:

Այս տեսանկյունից ելնելով՝ ՓՄՁ-ի զարգացման հիմնախնդիրները պայմանականորեն կարող ենք դասակարգել ըստ օրենսդրական, ֆինանսական, տեխնիկական և ենթակառուցվածքային գործոնների, որոնք իրենց ազդեցությունն ունեն թե՛ սկսնակ և թե՛ գործող ՓՄՁ սուբյեկտների գործունեության վրա: Առկա հիմնախնդիրների լուծումը կապված է նաև ՓՄՁ սուբյեկտների գործելու վայրի հետ (Երևան, ՀՀ մարզեր): Դրանք հատկանշական են հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերին:

Անհրաժեշտ է նշել, որ ՓՄՁ-ների զարգացմանը խոչընդոտող օրենսդրական բնույթի հիմնախնդիրներն են՝

- ՓՄՁ սուբյեկտների և պետական մարմինների միջև փոխհարաբերություններում առկա վարչարարական բնույթի խնդիրները,
- ֆինանսական (հաշվապահական) հաշվետվությունների ներկայացման թերի ընթացակարգերը,
- հաճախակի կատարվող անհարկի ստուգումները:
- ՓՄՁ-ների զարգացմանը խոչընդոտող ֆինանսական բնույթի հիմնախնդիրներն են՝
  - սկսնակ գործարարների համար ֆինանսական (վարկային) միջոցներից օգտվելու անհնարինությունը, որը պայմանավորված է դրանց կարճաժամկետայնությամբ,
  - այլընտրանքային ֆինանսավորման (վարկավորման) աղբյուրների բացակայությունը, երկարաժամկետ ֆինանսական (վարկային) ռեսուրսների բացակայությունը, ինչը գերխնդիր է հատկապես արտադրության ոլորտում:

ՓՄՁ-ների զարգացմանը խոչընդոտող առանձին հիմնախնդիր է նաև միջմարզային և ներմարզային տնտեսական կոռպերացիայի ոչ բավարար մակարդակի առկայությունը: Այս ենթատեքստում առկա են տեղեկատվական հոսքերի մատչելիության, դրանց ընկալման, մշակման և փոխանակման հետ կապված խնդիրներ:

Նշենք, որ հատկապես մայրաքաղաքից դուրս գործող ՓՄՁ սուբյեկտների և սկսնակ գործարարների համար լուրջ հիմնախնդիր է բիզնեսի կազմակերպումն ու կառավարումը: Այս հիմնախնդիր լուծման ուղղությամբ բավարար չէ խորհրդատվական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների մակարդակը հատկապես ՀՀ մարզերում (որոշ մարզերում նմանատիպ կառույցներ ընդհանրապես չեն գործում): Այս առումով առկա է ՓՄՁ սուբյեկտների կողմից նման ծառայությունների կարևորության չգիտակցման փաստը: Անշուշտ, որակյալ խորհրդատվական ծառայությունների կարիք ունեն հատկապես սկսնակ գործարարները և գործող այն ՓՄՁ սուբյեկտները, որոնք փորձում են շուկայում ներկայացնել նորարարական արտադրանք կամ ծառայություն:

Այսպիսով, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը խոչընդոտող վերոնշյալ հիմնախնդիրների լուծումն իր որոշիչ դերը կարող է կատարել աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունն ապահովելու գործում: Փոքր և միջին բիզնեսը, հանդիսանալով շուկայական տնտեսության զարգացման

կարևոր ուղղություններից մեկը, նախադրյալներ կստեղծի, որպեսզի փոքր ձեռնարկությունները կոռապերացվեն խոշոր արտադրության հետ՝ արտադրելով էժան և որակով ապրանքներ, հաշվի առնելով սպառողի անհատական պահանջմունքներն ու նախասիրությունները:

#### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

1. «Экономика и бизнес /теория и практика предпринимательства/». Под ред. **В. Д. Камаева**, М., 1993 г.
2. «Экономика и статистика малых фирм». Под ред. проф. **С. Д. Ильинковой**, М., «Финансы и статистика», 1996 г.
3. **Волкова Н.** Экономика предприятия. М., 2002 г.

#### **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ**

1. [www.mss.am](http://www.mss.am) ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայք
2. [www.armstat.am](http://www.armstat.am) ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք
3. [www.gov.am](http://www.gov.am) Կառավարության պաշտոնական կայք

#### **РОЛЬ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА В ОБЕСПЕЧЕНИИ ЭФФЕКТИВНОСТИ ТРУДОВЫХ РЕСУРСОВ**

*M. N. Ергнян  
E. P. Մանուկյան*

В работе важное место отводится роли малого и среднего бизнеса как одного из важных направлений рыночной экономики, развитие которой создает предпосылки для кооперации малых предприятий с крупным производством производя дешевые и качественные товары с учетом индивидуальных потребностей потребителя.

Освещая проблемы, препятствующие развитию отрасли, представлена роль малого и среднего бизнеса в обеспечении эффективности трудовых ресурсов.

#### **THE ROLE OF THE SMALL AND MIDDLE BUSINESS IN THE PROCESS OF PROVIDING EFFICIENCY IN USING LABOR RESOURCES**

*M. N. Hergnyan  
E. P. Manukyan*

The article deals with the importance of the small and middle businesses as one of the key trends of the market economy, the development of which will promote the cooperation of small enterprises with large output production, which will produce not expensive and high-quality items, taking into account the consumers' individual demand and preferences. The role of the small and middle business in the process of providing efficiency in using labor resources is presented, clarifying the obstacles of the development of that field.